ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Առատաշենի համայնք, գ. ԱՌԱՏԱՇԵՆ ,

N 119
04 դեկտեմբեր 2013թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՇՈՏ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Ղահրամանյան.

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն գյուղական համայնքի ավագանու 2013թվականի նոյեմբերի 26-ի թիվ 11 նիստի որոշումները:

Առդիր 16 էջ:

Համայնքի ղեկավար՝ Վահրամ Հարությունյան

Կատ. 2-կարգի մասնագետ՝ Շ. Վարդանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

26 նոյեմբերի 2013թ. Թիվ 11 նիստի

ՈՐՈՇՈՒՄ 39

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի չորրորդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն գյուղական համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի թիվ 11 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝

1. Զավեն Ինջիդուլյան
2. Վաչե Կիրակոսյան
3. Նելլի Ահարոնյան
4. Գրիգոր Մակարյան
5. Գուրգեն Խաչատրյան
6. Ռոման Ավագյան

Համայնքի ղեկավար՝ Կ.Հարությունյան

26 նոյեմբերի 2013թ.
գ.Առատաշեն

ՀԱՎԵԼՎԱԾ
26 նոյեմբերի 2013 թվականի
Առատաշեն գյուղական համայնքի
Ավագանու թիվ 11 նիստի N39 որոշման

1. Օրակարգի հաստատում.
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն գյուղական համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 07-ի թիվ 21-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.
3. Սոցիալապես անապահով ընտանիքներին և նորածին երեխաներին գումար հատկացնելու մասին.
4. Գումար հատկացնելու մասին.
5. Առատաշենի գյուղապետարանի <<Կրթություն և մշակույթ>> միացյալ տնօրինության, <<Առատաշենի մանկապարտեզ>>ՀՈԱԿ-ի հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին.
6. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն գյուղական համայնքի վարչական տարածքում 2014 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

---

26 նոյեմբերի 2013թ. Թիվ 11նիստի

ՈՐՈՇՈՒՄ 40-Ն
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՆՅՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 07-Ի ԹԻՎ 21-Ն
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի » Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի երկրորդ մասով, 70-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, «Բյուջետային համակարգի»Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն գյուղական համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 07-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն գյուղական համայնքի 2013 թվականի բյուջեն հաստատելու մասին»թիվ 21-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից::

Ավագանու անդամներ՝

1. Զավեն Ինջիղուլյան
2. Նելլի Ահարոնյան
3. Գրիգոր Մակարյան
4. Գուրգեն Խաչատրյան
5. Վաչե Կիրակոսյան
6. Ռոման Ավագյան

Համայնքի ղեկավար՝ Վ.Հարությունյան
2013թվականի նոյեմբերի 26
գ. Առատաշեն

ՀԱՎԵԼՎԱԾ

26 նոյեմբերի 2013 թվականի Առատաշեն
Գյուղական համայնքի ավագանու թիվ 11նիստի
40-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի ԹԻՎ 21-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍ

1) Գյուղապետարան (01.1.1)
   ա)4111 հոդվածից պակասեցնել 1500.0 հազ.դրամ
   բ) 4212 հոդվածին ավելացնել 400.0հազ.դրամ
   գ) 4239 հոդվածին ավելացնել 200.0 հազ.դրամ

2) Ընդհանուր բնույթի ծառայություններ (1.3.3)
   ա) 4252 հոդվածին ավելացնել 700.0 հազ. դրամ
   բ) 4239 հոդվածին ավելացնել 200.0 հազ.դրամ

3) Նախադպրոցական ուսուցում (9.1.1)
   ա) 4511 հոդվածին ավելացնել 550.0 հազ.դրամ
   բ) 4269 հոդվածից պակասեցնել 1000.0 հազ. դրամ
   գ) 5122 հոդվածից պակասեցնել 800.0 հազ.դրամ

4) Համայնքային զարգացում (6.2.1)
   ա) 5113 հոդվածին ավելացնել 500.0 հազ. դրամ
   բ) 5134 հոդվածին ավելացնել 300.0 հազ. դրամ

5) Սոցիալական օգնություն(10.7.1)
   ա)4729 հոդվածին ավելացնել 450.0 հազ. դրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

26 նոյեմբերի 2013թ. Թիվ 11 նիստի

ՈՐՈՇՈՒՄ 41
ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ և ՆՈՐԱԾԻՆ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունն՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն գյուղական համայնքի բյուջեի 10.7.1-ի (սոցիալական օգնություն) 4729 հոդվածից հատկացնել դրամական օգնություն համայնքի բնակիչներին՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝

1. Զավեն Ինջիղուլյան
2. Նելլի Ահարոնյան
3. Գրիգոր Մակարյան
4. Գուրգեն Խաչատրյան
5. Վաչե Կիրակոսյան
6. Ռոման Ավագյան

Համայնքի ղեկավար՝ Վ.Հարությունյան

2013թվականի նոյեմբերի 26
գ. Առատաշեն

ՀԱՎԵԼՎԱԾ

26 նոյեմբերի 2013թ. Առատաշեն
գյուղական համայնքի ավագանու
թիվ 11 նիստի 41 որոշում

ՑՈՒՑԱԿ

ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԱԾԻՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ

1. Գելոյան Արթուր Օնիկի	30.000(երեսուն հազար) դրամ
2. Մակարյան Մանուկ Պավլուշայի	30.000(երեսուն հազար) դրամ
3. Վարդանյան Էդգար Մերուժանի	30.000(երեսուն հազար) դրամ
4. Անտոնյան Ռաֆիկ Անդրանիկի	30.000(երեսուն հազար) դրամ
5. Ֆերոյան Մաջիթ Աբասի	30.000(երեսուն հազար) դրամ
6. Սիմոնյան Աբրահամ Համբարձումի	30.000(երեսուն հազար) դրամ
7. Բարսեղյան Եղիազար Գագիկի	30.000(երեսուն հազար) դրամ
8. Ղազարյան Գեղանուշ Մխիթարի	30.000(երեսուն հազար) դրամ
9. Բաղումյան Վարդան Ներսեսի	30.000(երեսուն հազար) դրամ
10. Ամիրյան Գալուստ Արայիկի	30.000(երեսուն հազար) դրամ
11. Մնացականյան Մարգարիտ Հակոբի	30.000(երեսուն հազար) դրամ
12. Պետրոսյան Զարմիկ Երվանդի	30.000(երեսուն հազար) դրամ
13. Վարդանյան Աիդա Արտավազդի	30.000(երեսուն հազար) դրամ
14. Վարդանյան Խաչիկ Կամոյի	30.000(երեսուն հազար) դրամ
15. Թեմուրյան Արտուշ Մովսեսի	30.000(երեսուն հազար) դրամ
16. Ասատրյան Կարինե Ազիզի	30.000(երեսուն հազար) դրամ
17. Պողոսյան Ծովինար Զավենի	30.000(երեսուն հազար) դրամ
18. Տերտերյան Վարդան Մասիսի	30.000(երեսուն հազար) դրամ
19. Բարսեղյան Քնարիկ Համբարձումի	30.000(երեսուն հազար) դրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

26 նոյեմբերի 2013թ. Թիվ 11 նիստի

ՈՐՈՇՈՒՄ 42
ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետի և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունն՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն գյուղական համայնքի բյուջեի 8.4.1-ի (երիտասարդական ծրագրեր) 4237 հոդվածից երեք հարյուր հազար դրամ հատկացնել համայնքի՝ մինչև ութ տարեկան երեխաներին ամանորյա նվերներ տրամադրելու համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝

1. Զավեն Ինջիղուլյան
2. Նելլի Ահարոնյան
3. Գրիգոր Մակարյան
4. Գուրգեն Խաչատրյան
5. Վաչե Կիրակոսյան
6. Ռոման Ավագյան

Համայնքի ղեկավար՝ Վ.Հարությունյան

2013թվականի նոյեմբերի 26
գ. Առատաշեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

26 նոյեմբերի 2013թ. Թիվ 11 նիստի

ՈՐՈՇՈՒՄ 43

ԱՌԱՏԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ, «ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ»ՄԻԱՑՅԱԼ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ,«ԱՌԱՏԱՇԵՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ»ՀՈԱԿ-Ի ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐ Ը ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշենի գյուղապետարանի, «Կրթություն և մշակույթ»միացյալ տնօրինության և «Առատաշենի մանկապարտեզ»ՀՈԱԿ-ի 2014թվականի հաստիքացուցակները և դրույքաչափերը՝ համաձայն հավելված N1,N2, N3:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝

1. Զավեն Ինջիդուլյան
2. Վաչե Կիրակոսյան
3. Նելլի Ահարոնյան
4. Գրիգոր Մակարյան
5. Գուրգեն Խաչատրյան
6. Ռոման Ավագյան

Համայնքի ղեկավար՝ Վ.Հարությունյան

26 նոյեմբերի 2013թ.

գ.Առատաշեն

ՀԱՎԵԼՎԱԾՈՒ
26 նոյեմբերի 2013 թվականի
Առատաշեն գյուղական համայնքի
Ավագանու թիվ 11 նիստի N43որոշման

ԱՌԱՏԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

NN	Հաստիքացուցակը	դրույքը	Դրույքաչափը (հազ.դրամ)
1.	Համայնքի ղեկավար	1	195300
2.	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	145000
3.	Աշխատակազմի քարտուղար	1	142900
4.	Գլխավոր մասնագետ	1	140800
5.	Առաջատար մասնագետ	1	115200
6.	I կարգի մասնագետ	1	112900
7.	II կարգի մասնագետ	1	102500
8.	II կարգի մասնագետ	1	102500
9.	վարորդ	1	79400
10.	Օժանդակ բանվոր	1	59524
11.	հավաքարար	1	59524
12.	պահակ	1	59524
	ընդամենը		1315072

ՀԱՎԵԼՎԱԾ N2
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Առատաշեն
Գյուղական համայնքի ավագանու
2013թվականի նոյեմբերի 26-ի
N43որոշման

«ԱՌԱՏԱՇԵՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ

NN	Հաստիքացուցակ	դրույք	Դրույքաչափը(հազ.դրամ)
1.	Տնօրեն	1	94000
2.	դաստիարակ	2.24	92600
3.	Երաժշ. դաստիարակ	0.5	92600
4.	Բուժ.քույր	0.5	59524
5.	Լվացքարար	1	59524
7.	Դաստիարակի օգնական	2	59524
7.	Հաշվապահ	0.5	59524
8.	խոհարար	1	59524
9.	Տնտեսվար	0.5	59524
10.	պահակ	1	59524
11.	Գործավար	0.5	59524
12.	Խոհարարի օգնական	0.5	59524

13.	Հաշվետար-գանձապահ	0.5	59524
14.	Օժանդակ բանվոր	0.5	59524
15.	դռնապահ	0.5	59524

ՀԱՎԵԼՎԱԾ N3
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Առատաշեն
Գյուղական համայնքի ավագանու
2013թվականինոյեմբերի 26-ի
N43 որոշման

«ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ» ՄԻԱՑՅԱԼ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ

NN	Հաստիքացուցակ	դրույք	Դրույքաչափը(հազ.դրամ)
1.	Տնօրեն	1	65000
2.	հավաքար	1	59524
3.	պահակ	1	59524
4.	հաշվապահ	1	59524
	ընդամենը		243572

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

26 նոյեմբերի 2013թ. թիվ 11 նիստի

ՈՐՈՇՈՒՄ 44-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 18-րդ կետով, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ և 10-րդ հոդվածներով և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի երկրորդ մասով .

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն գյուղական համայնքի վարչական տարածքում 2014 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներրորդ օրը:

Ավագանու անդամներ՝

1. Զավեն Ինջիղուլյան
2. Նելլի Ահարոնյան
3. Գրիգոր Մակարյան
4. Գուրգեն Խաչատրյան
5. Վաչե Կիրակոսյան
6. Ռոման Ավագյան

Համայնքի ղեկավար՝ Վ.Հարությունյան

2013թվականի նոյեմբերի 06
գ. Առատաշեն

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-Ի
ԹԻՎ 44-Ն ՈՐՈՇՄԱՆ

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7500 (յոթ հազար հինգ հարյուր) դրամ

2) սույն կետի 1-ին ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 7500 (յոթ հազար հինգ հարյուր) դրամ.

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 7500 (յոթ հազար հինգ հարյուր) դրամ.

գ. 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25.000 (քսանհինգ հազար) դրամ.

դ. 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50.000 (հիսուն հազար) դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1000 (մեկ հազար) դրամ

4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15.000 (տասնհինգ հազար) դրամ

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝1000 (մեկ հազար) դրամ

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի,

կիրառվում են նաև նոր շինարարության համար <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 1000 (մեկ հազար) դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 4.500 (չորս հազար հինգ հարյուր) դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 3000 (երեք հազար) դրամ:

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350 (երեք հարյուր հիսուն) դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150.000 (մեկ հարյուր հիսուն հազար) դրամ.

3) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 30.000 (երեսուն հազար) դրամ

4) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 5000 (հինգ հազար) դրամ

ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 1000 (մեկ հազար) դրամ.

6. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար 50.000 (հիսուն հազար) դրամ:

7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1) առևտրի օբյեկտների համար՝ 25 000 (քսանհինգ հազար) դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000 (հիսուն հազար) դրամ.

3) բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000 (երկու հարյուր հազար) դրամ.

4) խաղատների կազմակերպման համար՝ 250.000 (երկու հարյուր հիսուն հազար) դրամ.

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000 (երկու հարյուր հիսուն հազար)դրամ.-

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000(հարյուր հազար) դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000(մեկ հազար) դրամ.

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500(երկու հազար հինգ հարյուր) դրամ.
3) այլ արտաքին գովազդի համար՝ 500(հինգ հարյուր) դրամ.
4) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 (յոթ հարյուր) դրամ:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 500 (հինգ հարյուր) դրամ: Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50 000 (հիսուն հազար) դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 10.000 (տաս հազար) դրամ:

11. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1000 (մեկ հազար) դրամ.

12. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1000 (մեկ հազար) դրամ.

13. Համայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար՝ 1000 (մեկ հազար) դրամ.

14. Համայնքի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ աղբահանության վճար՝ 500 (հինգ հարյուր) դրամ.

15. Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար համայնքի կողմից տրամադրվող թույլտվության վճար՝ 2000 (երկու հազար) դրամ: